ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ՆՇՎԱԾ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ: ՀԵՏԵՎԵՔ ԴՐԱՆՑ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավական մակարդակում միջազգային դատարանների վճիռների և որոշումների կատարումն ունի առանձնահատուկ կարևորություն: Այս առումով բացառություն չէ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ): Ավելին՝ ՄԻԵԴ վճիռների կատարումը ԵԽ անդամ պետություններում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդրման ու կիրարկման կարևորագույն գործիքներից է: Այն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) ուժով համարվում է պետության միջազգային իրավական պարտավորություն:

Որքան զարգացած է ՄԻԵԴ վճիռների կատարման կառուցակարգը Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կոնկրետ անդամ պետությունում, այնքան մեծ է տվյալ երկրում եվրոպական իրավական չափանիշների ներքո մարդու իրավունքների ապահովման գործիքակազմի շրջանակը: Այս իմաստով, ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարումը ոչ միայն կարևոր է Հայաստանի՝ որպես ԵԽ անդամ պետության համար, այլև հեռանկարային է մարդու իրավունքների պաշտպանության (protection) և խթանման (promotion) տեսանկյունից: Ավելին, ինչպես արդեն վերը նշվեց՝ դա բխում է նաև պետության ստանձնած միջազգային պարտավորություններից:

Հատկանշական է, որ Հայաստանն ունի ՄԻԵԴ վճիռների արդյունավետ և ինտենսիվ կատարման երկար տարիների փորձ: Առնվազն վերջին (շուրջ) տասը տարիների ընթացքում ՄԻԵԴ վճիռների կատարումը Հայաստանում եղել է բավականաչափ հաջողված, երբեմն՝ օրինակելի ԵԽ մյուս անդամ պետությունների համար, ինչը նշանակում է, որ վճիռների կատարման հայաստանյան մոդելը իր դրական հետագծով համեմատության մեջ եղել է արդյունավետ և որոշակիորեն զարգացել է ժամանակի մարտահրավերներին զուգահեռ:

Դրա հետ մեկտեղ, ՄԻԵԴ իրավաբանության և ԵԽ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների զարգացմանը զուգահեռ կատարելագործվում է նաև վճիռների կատարման եվրոպական համակարգը: Նաև նորովի են օգտագործվում առկա հնարավորությունները, որոնց մասին իրազեկված իմացությունն ու գործընթացի առանձնահատկությունների մասին պատկերացումներն անհրաժեշտ են առանձին պետական կառույցների և շահագրգիռ հաստատությունների համար:

Ուստի, օբյեկտիվորեն կարիք է զգացվում ապահովելու իրավասու պետական մարմինների, ներառյալ՝ դատախազության և դատական մարմինների մասնակցությունը տվյալ գործընթացին: Դա նաև նպաստելու է ՄԻԵԿ չափանիշները ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում ներդնելու ընդհանուր գործին:

*Սույն հեռաուսուցման դասընթացի շրջանակում «վճիռների կատարում» (execution of judgments) արտահայտությունը կիրառվում է առավել ընդգրկուն իմաստով՝ իր մեջ ներառելով ՄԻԵԴ և՛ վճիռների (judgments), և՛ որոշումների (decisions) իմպլեմենտացիան:

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Վերը նշվածով պայմանավորված գործող դատավորների և դատախազների համար այս դասընթացը կարող է լինել օգտակար ինչպես ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցության արդյունավետության, այնպես էլ ՄԻԵԿ չափանիշների՝ ներպետական օրենսդրության մեջ ներդնելու, հետագայում ՄԻԵԴ–ի արձանագրած խախտումները կանխելու կամ բացառելու տեսանկյունից:

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր ունկնդրի իմացության (նաև դասին մասնակցության) հիմնական ցուցիչներն են ինքնաստուգիչ հարցերին տրված պատասխանները: Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ունկնդիրը կտիրապետի ստորև ներկայացված ոլորտներին առնչվող գիտելիքներին:

1.ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթաց. ընդ որում հետևյալ հարցերի վրա շեշտադրմամբ՝

*1)*ՄԻԵԴ վճիռների կատարման էությունը և նպատակը,

*2)*ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ընդհանուր նկարագրությունը,

*3)*ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցող գլխավոր դերակատարները և հիմնական շահառուները,

*4)*ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությունը:

2.ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովող իրավական գործիքներ և կառուցակարգեր. ընդ որում հետևյալ հարցերի վրա շեշտադրմամբ՝

*1)*ՄԻԵԿ 39-րդ, 41-րդ և 46-րդ հոդվածների նշանակությունն ու կիրառումը ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում,

*2)*ԵԽ Նախարարների կոմիտեի վերահսկողությունը ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ,

*3)*ՄԻԵԴ վճիռների կատարմանն առնչվող ԵԽ հռչակագրերը,

*4)*ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի սահմանադրահիրավական հիմքերը, ինչպես նաև ՄԻԵԴ վճռից հետո գործերի վերաբացման միջազգային և ներպետական կառուցակարգերը՝ որպես վճիռների կատարման կարևոր տարր:

3.ՄԻԵԴ վճիռների կատարում և կատարման նկատմամբ վերահսկողություն. ընդ որում հետևյալ հարցերի վրա շեշտադրմամբ՝

*1)*ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության երկաստիճան կամ երկընթաց (twin-track) մեխանիզմները. վերահսկողության ստանդարտ (standard procedure) և ուժեղացված (enhanced procedure) ընթացակարգեր,

*2)*Կատաման ենթակա ՄԻԵԴ վճիռների (գործերի) դասակարգումը, դրանց տեսակները,

*3)*Գործողությունների ծրագրերը (action plans) և գործողությունների հաշվետվությունները (action reports)՝ որպես ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության գործիքակազմ:

4.ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի եխ կառուցակարգեր և դերակատարներ. ընդ որում հետևյալ հարցերի վրա շեշտադրմամբ՝

*1)*ՄԻԵԴ դերը վճիռների կատարման գործընթացում,

*2)*ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ Նախարարների կոմիտեի վերահսկողությունը Մարդու իրավունքների նիստերի (CM-DH meetings) միջոցով,

*3)*ՄԻԵԴ վճիռների կատարմանն առնչվող Նախարարների կոմիտեի միջանկյալ և վերջնական ռեզոլյուցիաներն ու որոշումները:

5.ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ներպետական կառուցակարգեր և դերակատարներ. ընդ որում հետևյալ հարցերի վրա շեշտադրմամբ՝

*1)*Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո գտնվող՝ Հայաստանի վերաբերյալ վճիռների/վճիռների խմբերի կատարման վիճակը,

*2)*Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների դերը, ինչպես նաև Գլխավոր դատախազության մասնակցությունը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին,

*3)*ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մարդու իրավունքների ազգային հաստատության (NHRI) և կանխարգելման ազգային մեխանիզմի (NPM), ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավման անհրաժեշտությունը,

*4)*Հայաստանի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի դերը և գործառույթները ՄԻԵԴ վճիռների կատարման գործում, ինչպես նաև ոլորտում պետական իրավասու մարմինների միջև փոխգործակցությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հեռաուսուցման դասընթացի հիմնական գաղափարներն ու ուղերձները ներկայացվելու են համապատասխան դասերի համար նախատեսված նյութերում:

Դասընթացի բովանդակության հետ մեկտեղ ստորև հաջորդաբար ներկայացված են յուրաքանչյուր դասի նյութերում տեղ գտած հիմնական գաղափարներին վերաբերող թեմաները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1)ՆԱԽԱԲԱՆ

2)ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

3)ԴԱՍ 1. ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

4)ԴԱՍ 2. ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

5)ԴԱՍ 3. ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

6)ԴԱՍ 4. ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵԽ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

7)ԴԱՍ 5. ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հեռաուսուցման դասընթացը պատշաճ ընկալման և յուրացման համար կիրառական նշանակություն ունի ինքնաստուգիչ հարցերի և առաջադրանքի մշակումն ու ներդրումը: Ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու և առաջադրանքը կատարելու միջոցով ունկնդիրները հնարավորություն են ստանում առավել խորությամբ հասկանալ ինչպես համապատասխան տեքստը, այնպես էլ դրա կիրառական արժեքը (օրինակ՝ առաջադրանքի պատշաճ կատարման համար տեքստի ընկալումը պարտադիր է):

Սույն հեռաուսուցման դասընթացի համար նախատեսվում է ինքնաստուգիչ հարցերի՝ որպես ընկալմանը նպաստող մեթոդի/միջոցի կիրառումը:

ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ են՝

1) Համակարգիչ (ունկնդրելու հարմարություններով)
2) Համացանց մուտք գործելու հնարավորություն (wi-fi սարքավորում և այլն)

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Սույն հեռաուսուցման դասընթացների թեմաների յուրացման համար բավարար են բուհերի իրավաբանության ֆակուլտետների բակալավրիատի ծրագրերում ընդգրկված մասնագիտական առարկաների շրջանակներում ձեռքբերված գիտելիքները:

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Սույն հեռաուսուցման դասընթացների ժամանակացույցը մանրամասն ներկայացված է ուսումնական պլանում: Հեռաուսուցման դասընթացի ընդհանուր տևողությունը ___ շաբաթ է (յուրաքանչյուր շաբաթ ___ ժամ ծավալով, ընդհանուր՝ ___ ժամ ծավալով):